# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> հուլիսի 2026թ. N ՄՌ/407-Ա

ք. Արմավիր

**«ԹԱԻՐՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻՆԵ ԲԱՂՈՒՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մարինե Բաղումյանի 2026 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Բաղումյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ 3 աշխատանքային օր տևողությամբ և 2025-2026 թվականների աշխատանքային տարվա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 12 աշխատանքային օր տևողությամբ, 2026 թվականի հուլիսի 9-ից 29-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:

2. Մարինե Բաղումյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Մարիամ Ոսկանյանին:

3. «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Մարիամ Ոսկանյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 9-ից 29-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:

4. Մարինե Բաղումյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հուլիսի 30-ից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720083 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

04447253